ԱՐՄԱՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՐԱՖԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 14րդ չրջանի (98օգոստ.— 99 մայիս) բաժնորդագինն է 20 ֆր. կանխիկ։ Կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզուի, ասոնց մէկ ամսականը 2½ ֆր. հաշուելով և 1899 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետևեալ հասցեով. M. PORTOUKALIAN, Rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)։

ՀԴ ՏԱՐԻ ԹԻՒ 60

1899 ՄԱՐՏ 8

1899 ՓԵՏՐՈՒԱՐ 24 (Հ. Տ.)

ՀԱՅԿԱԿԱՆ

ԿԸՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ Դ. և ՇԲՓ. օրեր

ԳՈՎԱԶՆԱԳԻՆ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտութիւն և վերապահութիւն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւններէն։ Գործակատար չէ վերադարձնելու չհրատարակուած ձեռագիրները։

Տարեկան կ՚ընդունուին հայերէն և ֆրանսերէն լրագրով։

Տարեկան 1 մէջկաղերը 1 սանթիմհարժէք։ Գրութիւն 2 սանթիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de Rédaction : Rue Glandevès, 17.

ՕՐՕՑԱՅՑԻԿՈՒԹԻՒՆ

Վեհափառ կաթողիկոսի կոնդակը Պարսկաստանի եւ Հնդկաստանի Հայերին։— Ակնարկ մը. — Նամակ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն (Ֆրէսնօ). — Տեղական. — Նախիջեւանի նորութիւններ Արմէնիայէն։ — Ներքին լուրեր. — Ազդ. — Մակեդոնիա. — Ծայրագոյն Աբեւելքի գործեր։ — Արտասահմանի լուրեր։ — Ծանուցումներ։

ԱՐՄԷՆԻԱՅԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

Յոխորտաբար կը խնդրենք մեր այն բաժնորդներէ որոնք դեռ անվճար թողուցած են իրենց բաժնորդագիրը, փութալ ներկայ մարտ ամսին մէջ հասցունել մեզ այն, օրով թէ՛ իրենց պարտականութիւն ցոյց ալած և թէ՛ գործին դիւրութիւն առած կը լինին որովհետև տեղական սովորութեան համեմատ լինելիք կանխավճարների գլխաւոր պայմանաժամներէ մին է լատինական Զատիկը (մարտ 21/2 ապրիլ)։

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻՆ

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՑ ԲՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՐԻՆ ԱՍՏՈՒԱԾՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ եւ կաթողիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն պատրիարք համազգական նախամեծար Գրիգոր Արքեպիսկոպոս Ագաղելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի։

Հայկազուն հարազատ որդւոց Մայր Գրիգորիս Մերոյ բնակելոց ի Պարսկաստան և ի Հնդկաստան ի հոչակաւոր քաղաքս նոցին, ի Թէհրան, յԱսպահան, ի Զուղայ, ի Կալկաթայ, ի Մադրաս և ի Զաւա և յայլ և այլ կողմս կողմանցն, նուիրեմք զԱստուածային օրհնութիւն և զՓրկչաւանդ ողջոյն, Սրբանուէր քահանայից, արկաւագաց և ամենայն Եկեղեցականաց դասուց, բարեպաշտ երեսփոխանաց, բարեսէր հոգաբարձուաց, հաւատարիմ աթոռակալաց և գանձապետաց, քրտնաջան երկրագործաց, պարկեշտասուն տանտիկնանց, համեստափայլ օրիորդաց, ջերմեռանդ երիտասարդաց, և առ հասարակ սիրելի ժողովրդոց Մերոց ա. րանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն չափու հասակի հաւատացեալ ի Քրիստոս խնդալ ի Տէր։

Շնորհք, ողորմութիւն, դթութիւն Աստուծոյ Հօր, պահպանութիւն և մարգասիրութիւն Որդւոյն Մի՛ածնի Յիսուսի Քրիստոսի, սէր, միխիթարութիւն և խաղաղութիւն կենդանարար Սրբոյ Հոգւոյն, չնորհաբաշխ օրհնութեամբ և պարգևաձիր առատութեամբ Մօրս Լուսոյ Սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի վեհմեծաձայն Ս. Յաճարիս, սքանչելագործ Ս. Գեղարդին և փայտին կենաց, ներկելոյ արեամբ Փրկչին Յիսուսի և հրաշալի նշխարաց սրբազան Առաքելոցն Քրիստոսի և նախկին Լուսաւորչաց Հայաստանեայց աչխարհի Թադէոսի և Բարդուղիմէոսի և այլոց երկրորդի Լուսաւորչի հոգւոց մերոց սրբոյն Գրիգորի ի Մեծի և բնաւից սրբութեանց գանձելոց աստանօր ի մայրավանսն բարեաւեան՝ հովանաւորին ի վերայ հոգւոց և մարմնոց Ձերոց, որովք զօրացեալ արիացեալ կացցիք անսասան ի փորձութեանց կենցաղոյս՝ յաւետանելոք ի բարի վարս և ի յաղողութիւնս. Ամէն։

Եւ ընդ Տեառնապարգև առաքելականն ողջոյնիս և օրհնութեանցս յայտ առնեմ սիրեցելոցդ առ ի մէնչ որդւոց, զի ըստ բազմապեսի հոգևոր պիտոյից և կարեաց վիճակիդ Պարսկաստանի և Հնդկաստանի, որ թափուր յԱռաքելոցդէ մնայր՝ հրաժարմամբ Գերապատիւ Տ. Եսայի արքեպիսկոպոսի, արժան համարեցաք կարգել ի պաշտօն առաջնորդութեան վիճակիդ զԳերապատիւ Մաղաքիա եպիսկոպոս Տէրունեան, զվիճառնակից Սրբոյ Աթոռոյս, զոր և առաքեցաք առ Ձեզ ի կատարել զիւրն պաշտօն և ի բարւոք տնօրինել զվիճակային, ըստ կրթական, զբարեկարգական և զայլ ամենայն գործս ըստ արժանւոյն։

Մեք լիայոյս եմք, զի նորընտիր առաջնորդն Ձեր և սիրելին Մեր՝ արժանաւոր յատկութեամբք իւրովք արժանացեալ սիրալիր ընդունելութեան և համակրանաց, միանգամայն յաւէտ գտեալ զարժանին նպաստ և գաղակցութիւն ըստ բարոյականին և ըստ նիւթականին, գիտասցէ լցուցանել զբազմակարօտ պէտս Եկեղեցեաց և Ուսումնարանաց վիճակիդ և պաշտպանեսցէ զամենայնս Եկեղեցւոյ Հայաստանեայց ի չար սերմանց թշնամւոյն ճշմարտութեան, ի բաց խլելով զորոմանս չարս ի յայգւոյն, զգուշացուցեալ զամենեսեան ի հոգեկորուստ գաղափարաց օտարոտութեան նկրտմանց և հովուեսցէ զՁեզ ի վայրի գալարուոյ և առ լուրս հանգստեան Աւետարանական վարդապետութեան և սիրապարգև խաղաղութեան, որպէսզի և Ձեզ ինչ ոչ պակասեսցէ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ օրհնութեամբ բարձրելոյն Աստուծոյ։

Ահն ունիմք, սիրելի՛ որդեակք, և Աստուածպաշտութիւնն որ ի Ձեզ՝ յետ այսորիկ ևս առաւել վառեսցի և բորբոքեսցի ի սիրտս և ի հոգիս Ձեր քաջոգութեամբք նորընտիր Առաջնորդին Ձերոյ Մաղաքիայի եպիսկոպոսի Տէրունեան. լուարո՛ւք զոր քարոզեսցէ Ձեզ ի Տէր Յիսուս Քրիստոս և մանաւանդ ունկնդիր լերո՛ւք բանին կենաց յաճախակի ընթերցմամբ սրբազան դրեանց։ Զի՛նչ առաւել անձկալի և հաճելի իցէ առն բարեպաշտի և Աստուածասիրի քան զառաքինութիւնս հոգեկեցոյցս և զբարեգործութիւնս հանրաշահս և ազգաչէնս, որք գիտեն հիւսել պսակս պարծանաց ի գլուխս այնոցիկ, որոց արդիւնաւորեալ են սիրտք և լեզուք հաւատովք և յուսով վայելման երկնից արքայութեան։ Այլ և զի՞նչ օգուտ է մարդոյ, ըստ Տեառն հրամանի՝ զաշխարհ ամենայն չահել և զանձն իւր տուժել. մինչդեռ հոգին առաւել է քան զմարմին և հոգին է որ կեցուցանէ զմարդ և բաղձանք հոգւոյն դիմեն յարաժամ ի յաւիտենականութիւն, անդ միայն գտանելով զհանգիստ, զնորս և զլ փրկութիւն։ Վասնորոյ, սիրելի որդեակք, յորդորեմ զՁեզ յանուն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի անդադար աքնել և անխոնջ զհետ լինել հոգեկանացն առաքինութեանց, ընկալեալ զսերմունս հոգևոր մշակութեան Ս. Աւետարանին, որպէսզի իբրև զերկիր պարարտ և արդասաւոր պտղաբերեսջիք զհարիւրապատիկն. նախանձաւորը լերո՛ւք չնորհացն, որք լաւագոյնք են։ Պատուիրեմք Հայրապարտ սիրելեացդ ամենեցուն, սիրեցէք զմիմեանս, զի Աստուած սիրոյ և խաղաղութեան բնակեսցի ի Ձեզ։ Քանզի Աստուած սէր է, և երկնաւոր վարդապետն մեր Քրիստոս, յօրինակ մեզ՝ սիրեաց զիւրան և եւ զանձն փրկանս փոխանակ բազմաց։

Փութացարուք ուրեմն ի սէր և ի միութիւն և կացէք անդրդուելի ի հաւատս Ձեր, զոր ընկալեալ էք յարդանդէ Ս. Աւազանին։ Ջանացարուք պահել ի պատուականութեան ղեկեղեցիս և զսուրբ Տաճարս և զԱստուածարանս Ձեր ի բարեկարգ յարատևութեան և ի բարգաւաճ արդիւնաւորութեան, յամենայնի ձեռնտու և օգտակար լինելով ճգանց և չանից նորընտիր Առաջնորդին Ձերոյ, մանաւանդ ի չանս հարազատ դատաբարակութեան և կրթութեան ուստերացն և դստերացն Ձերոց, յորում հատատուն կայ յոյս ակնկալութեան համօրէն ազգիս մերոյ սիրեցելոյ և գլխաւոր և սրտեռանդն չանք և բաղձանք սրտի մերոյ այս իսկ է, զի միանուագ ամենայն որդիք եկեղեցւոյ մերոյ լինջին ուսեալք և լուսաւորեալք ճշմարիտ գիտութեամբ և դաստիարակեալ երկիւղիւն Աստուծոյ վասնզի անկասկած գիտել պարտիք՝ եթէ առանց ուղիղ դաստիարակութեան հոգւոց և մտաց և բարոյական մտաւոր կրթութեան չանհնարին է մեզ ունել, մանաւանդ ի ժամանակիս յայսմիկ, որդիս առաքինիս և մտաեալս եռանդեամբ զգացմանց ճշմարտութեան և ուղղափառ հաւատոյ և բորբոքեալս ի սէր հայրենի կրօնի և եկեղեցւոյ սրբոյ. միաձգամայն առանց լուսոյ գիտութեան չիք երբէք յոյս փրկութեան ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց։

Օրհնեսցէ զՁեզ Տէր աստուած և զամենայն բարենպատակ գործս և ըղձերակս, զերկիր Ձեր և զբնակութիւնս, զորդիս և զամենայն ընտանիս Ձեր, բարձցէ յերկրէ Ձերմէ զամենայն արկածս չարին և զվտանգս որ յաճախին ի մեզ վասն մեղաց մերոց։ Շնորհեսցէ Տէր աշխարհի զխաղաղութիւն, հիւանդութեանց բարձումն, անդաստանաց պտղաբերութիւն, որդւոց և դստերաց Ձերոց չնորհս և իմաստութիւն, հիւանդաց առողջութիւն, որտմեցելոց ուրախութիւն, աղքատաց այցելութիւն, մեղուցելոց դարձ և ղղջումն և ննջեցելոց Ձերոց հանգիստ և երկնից արքայութիւն։

Շնորհք Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ հոգւոց Ձերոց, հարազա՛տ որդեակք՝ սիրեցեալք և հաւատարիմք մօրս լուսոյ Սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի և Մեր, և խաղաղութիւն Աստուծոյ բազմացի ի վերայ Ձեր ամենեցուն. Ամէն։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս Հայրապետական ի 25ն Յունիսի 1898 ամի, և ըստ Տումարիս մերոյ ՌՃԽԷ. ի Հայրապետութեան Մերում Ե ամի, յԱյբարատեան Մայր Աթոռ ի Վաղարշապատ. Համար 789։

ԱԿՆԱՐԿ ՄԸ

(Շար. 59րդ թուհն եւ վերջ)

Ի՛նչ օգուտ կը սպասենք մարդասիրութեան և քրիստոնէութեան դիմակին ներքև ծածկուած այն օտարների բացած որբանոցներէն, ուր ամէն մէկոց ի գործ կը գրուի հայ ման սրտէն ու մտքէն հայութեան սէրն ու զգացումները խլացուցանելու։

Չէ՞ք տեսներ թէ լուսաւորեալ ու քաղաքակիրթ կոչուած քրիստոնեայ Եւրոպայի աչքին առջև և անոր թոյլտուութեամբը կատարուած հայկական ջարդերէն յետոյ, կաթոլիկ ու բողոքական միսիոնարներն ագռաւներու նման թափեցան Հայաստան ու Կիլիկիա և անօթի ժողովրդին ընկին. Ա՛ռ քեզ պատառ մը հաց և տո՛ւր դարերէ ի վեր պաշտած կրօնքդ...։

Ահա՛, Հայե՛ր, մեր որբերու պաշտպան հանդիսացողներն այսպիսի դիմակներու տակ ծածկուած բարեսէրներ են—բայառութիւնները կը յարգենք անչուշտ ու կը պատուենք չնոր հակալութեամբ— Թողու՞նք որ մեր խղխղուած եղբայրներէն ճնացած որբերն օտարի կաշկանդիչ ձեռքին ու հեղձուցիչ մթնոլորտին մէջ անհետանան ու մարին։ Ո՛չ երբէք, այլ դիտակցութիւն ունենանք մեր պարտականութեանց ու կատարենք զայն փութով։

Անոնք մերն են, մե՛ր և ոչ թէ ուրիշին. հետևաբար անոնց հոգածութեանն նուիրական պարտականութիւնն ալ մեզ կը պատկանի։ Լաւ ըմբռնենք այս։

Ցուզի մէջ է Հայաստան աչխարհ։ Վէրքեր ունի նա խոր, վշտեր՝ դառն կսկծալի որբ անմիջական դարմանի կը կարօտին։ Ո՞վ պիտի վերցնէ, պատռէ հայրենիքի սուգի սև շղարշը. ո՞վ պիտի դարմանէ նորա վէրքեր ու ըսփոփէ նորա վշտեր և կատարէ վրէժխնդրութեան այն վեհ ու նուիրական կտակը զոր թողուցին մեզ մեր նահատակեալ եղբայրներ։ — Մե՛նք միայն։

Սակայն մենք ալ, դժբաղդաբար, այնքան դառն փորձերէ յետոյ, տակաւին լոկ երևակայական յոյսերով ժամանակ կանցունենք և կը սպասենք որ Եւրոպան գայ ազատէ մեզ թուրքին անտանելի լուծէն։

Մ՚իթէ՞ դեռ բաւական չէ երևակայական յոյսերով անանիլ։ Քիչ մ՚ալ ժամանակաւ մեզ վիճակակից եղող և այժմ ազատ ապրող ազգերուն նայինք։ Եթէ չենք ուզեր շատ հեռուներն երթալ, գէթ վերջացող տարին իրենց ազատութիւնն ստացած երկու ազգերու, Ռուպայի ու Կրէտէի գործունէութենէն օրինակ առնենք։

Ի՞նչ ըրին անոնք։ Իրենց ծնած ու մեծցած երկրին, հայրենիքին մէջ երկար տարիներ ազատութեան գաղափարը տարածելէ յետոյ՝ իրենց յոյս իրենց բազուկներու վրայ դրած՝ կանխահոգ պատրաստութեամբ կազմ ու պատրաստ եղան օտքի։ Իրենց գործունէութեան ասպարէզ իրենց հայրենիքն ընտրեցին և ոչ թէ Մատրիտ, Պօլիս ցոյցեր սարքեցին։

Թիւրք զինուորն ի կրէտէ և Սպանիացին ի Ռուպա իրենց խժդժութիւնք չկրցան այնչափ յառաջ տանիլ անարգել, որովհետև հոն փոքր ի շատէ պատրաստութիւն և այժ ունեցող ապստամբ ժողովրդի մը քաջարի ընդդիմութեան բաղխեցան։

Իսկ Հայաստանի՞ մէջ։

Ո՛հ, սոսկում կը ղգամ երբ ակնարկ մը կը նետեմ չարդերու տխուր ու սարսռազդեցիկ շարքին վրայ։ Հայ ժողովուրդը՝ ոչխարներու նման սպանդանոց առաջնորդուած՝ կը խոշխոջուի ու կը մորթուի, ո՛չ ուրիք հաւաքական բուռն ընդդիմութիւն մը ցոյց տալով։

*Անուրանալի իրողութիւն մ՚է որ մեր հայրենիք Ռուպայէն ու Կրէտէն բոլորովին տարբեր, աննպաստ դիրք մ՚ունենալով՝ անոնց նման կազմակերպուելու դիւրութենէն զուրկ ենք. հետևաբար ուրիշներէ շատ աւելի լուրջ ու չրջահայեաց գործունէութիւն մ՚ունենալու էինք։ Սակայն ի՞նչ ըրին կեդրոնն ու բիւրոն— Բոլորովին հակառակը։ Փոխանակ ազատուած ազգերու թանկագին ու բազմարժէք փորձառութենէն օգուտ քաղելու, բոլորովին անտես առին անոնց դրծունէութիւն ու ազգասպան ցոյցերու եղերերգական շարք մը սկսեցին։ Ես չեմ ուզեր այժմ հոս եղբայրասպան սոսկալի ոճիրներու, գաղափարի ազնիւ հակառակորդներու դէմ ըրած ամենատգր զրպարտութիւններու և առասպելական պոռոտախօսութիւններու երկար շարքը հիւսել և ոչ ալ յանուն հայկական դատին ու դիւցազնածին Զէյթունի ի նպաստ բէվոլվէրի ծայրը ցոյց տալով հաւաքուած դրամներուն ուրիշ բաներու համար գործածուելուն դէմ բողոքել, այլ մատնանիշ կընեմ՝ այն ազգալինչ ուղղութիւն զոր կեդրոն ու բիւրօն սկսեցին իրենց գոյութեան օրէն և որ անխնելի յանդգնութեամբ դեռ կը շարունակէ բիւրօն։ Սխալը՝ ինչ որ ալ ըլլար արդիւնքն, թերևս ներելի ըլլար մէկ անգամի համար, երբ այսպէս ստուած յեղափոխական ինքնակոչ վարիչներ իսկոյն ըմբռնելով իրենց սխալ, ուղղէին զայն։ Սակայն անոնք ազգային չահէն վեր անձնական ատոր նկատումներ ու երևակայական փառքերու հասնելու երազներ ունենալով, չարունակեցին ու կը չարունակեն դեռ իրենց ազգակործան ընթացքը։ Ատոնց գործունէութիւն չատոնց սխալ չրջանէն անցած՝ աններելի ու անքաւելի ոճիրներու կարգն անցած է ա՛լ։ Սակայն դժբաղդաբար դեռ կը գտնուին կարգ մը «չէզոք» հրապարակագիրներ որք մեր Ցոն. Քիչօթ յեղափոխականներու ազգասպան ընթացքը արդարացնելու տխուր դերը յանձն կառնեն յեղյեղելով միշտ այսպիսի տողեր. «Մեր դժբաղդութիւնը ներէն յետոյ քաւութեան նոխազ մը պէտք էր աղէտին ամբողջ պատասխանատուութիւնը անոր վրայ բեռցնելու համար և այդ եղաւ հայ յեղափոխութիւնը»։

Պարոննե՛ր, ուչի ուչով հետաքրքրուեցէք մեր և ուրիշներու յեղափոխական կեանքով և եթէ անկեղծ էք, պիտի համոզուիք թէ մեր մէջ դեռ յեղափոխութիւն ըսուած բանը գոյութիւն չէ ունեցած և թէ մեր այս վիճակ ո՛չ թէ լոկ քաղաքական անբնական հանգամանքներու արդիւնք է, այլ սխալ գործունէութեան։ Լրջամիտ ու հեռատես գրիչներ վաղուց արդէն կանխատեսած են այս ամեն։ Կարդացէ՛ք Ախմէնիայի հին թիւերն ու պիտի համոզուիք։

Այդ ատեն չատեր միամտօրէն և ամենք ալ վատաբար նոյն իսկ յանդգնեցան այդ սխալ ընթացքի ապարդիւն և լոկ աղէտաբեր հետևանքները կանխատեսողներն անուանարկել Ախմէնիան, արդեօք ամսթի խայծ մը չե՞ն զգար այժմ իրենց ներսիդին։

Ը՛հ, հիմա, այս ամեն դժբաղդութիւններէ յետոյ ի՞նչ ընել պէտք է։

Լոկ մեր թշուառութիւնները ողբալով, ախ ու վախ կանչելով ու պատառ կնկան նման նստած Եւրոպան բամբասելով, ո՛չ մեր վէրքերը կը դարմանուին և ո՛չ ալ մեր վշտեր կը սփոփուին։ Բանա՛նք աչքերնիս ու տեսնենք թէ որո՞նք են մեր ճակատագրի հետ խաղցողներ և ո՞ւր կը տանին մեզ։ Ու յետոյ փոխանակ ղմեզ կոչղկուրայն բաղդին յանձնելու, ամենէ առաջ մեր յոյս մեր վրայ դրած, գիտակցութեամբ սկսելու ենք գործին։ Պէ՛տք է փնտռել մեր անյաղողութեանց պատճառներ ու օգտուիլ մեր անցեալ սխալներէն։

Պէտք է նախ քանդել ու ոչնչացնել այն արգելքներ որք խոչընդոտ կը հանդիսանան մեր հայրենիքի վերածնութեան ի. Գործին։

Պէտք է ճղմել այն ցեցեր որք հայութեան սիրտը կը կրծեն։

Պէտք է վերցունել մէջտեղէն այդ աւերակաց կոյտը, մաքրել գետինը, հիմնաւոր չենք մը հոն բարձրացուցանելու համար։

Վառգա ԿԻՆՇԱ

ՆԱՄԱԿ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ

Ֆրէսնօ, 18 փետր. 99

Ցաւալի տեղեկութիւնը զոր հաղորդեցի Սան-Ֆրանսիսքօէն ի մասին Ֆրէսնօի ազգայնոց, դժբաղդաբար ի. րողութիւն մ՚է։

Մարգարեան երկու եղբայրները, Ֆրանգ և Չարլըս կամ Սմբատ և Ա. րամ, ամբաստանուած էին իրենց խանութը դիտմամբ հրդեհելու ծանր յանցանքով։ Այսօր դատարանի առջև ալ իրենց յանցանք խոստովանելով, Նահանգային թիապարտութեան դատապարտուեցան. Սմբատ 9 տարիի և Ա.րամ 5 տարիի։ Դատաւորն իր վճռի մէջ յիշեց թէ իրենք պարկեշտ ծնողքի զաւակներ էին. առաջին անգամ էր որ այսպիսի յանցանքի մը մէջ կը բռնուէին և թէ գեռ երիտասարդ են, բայց և այնպէս հրդեհելու առաջնակարգ մեղաւորներ են. օրէնքը այդ կարգի յանցաւորների համար կը տրամադրէ 2 տարիէն ցմահ բանտարկութիւն. քանի որ իրենք խոստովանած էին իրենց յանցանքը և դատարանը ազատած էին ծախքերէ, այդչափ ղիրենք պատժելով կը գոհանար։

Սմբատ 24 տարեկան է և Ա.րամ 18. տղայամտութեամբ գործած էին այդ յանցանք, որպէսզի ապահովագրական ընկերութենէն 4000 տոլար գանձէին, իրենց կահ կարասիի խանութը ապահովագրած լինելով։ Տղայամտութեամբ ըսի, որովհետև իրենց գործած յանցանքը մասնաւոր դիտաւորով եղած էր բայց և այնպէս գործնականին մէջ լրջութեամբ յառաջ չէին տարած ոճիրը. սակայն դատաւորը որչափ որ մեղմացուցիչ հանգամանքներ ցոյց տուաւ իր վճռոյն մէջ, զացաւ նկատի առնել թէ այս օրինակ գործուած ձախող ելք ունենալու համար ոճիր մը պարզապէս չիմարների հեղինակութեան արդիւնք է և զորս այդչափ ծանր կերպով պատժելը բաւարար առաւել է քան յանցանքը, գիտնալով որ հրդեհը շուտ մարած է և վնաս կրողը միայն Մարգարեաններն եղած են։

Տիար Մ. Մարգարեան, դատապարտելոց հայրը, հեղձամղձուկ հեծկլտանքով մը լսեց իր զաւակների դատապարտութիւնը այսպիսի քրէական յանցանքի մը համար. կըսուի թէ ինք ստիպած էր իր զաւակները խոստովանելու։ Տիար Մ. Մարգարեան վաղուց ի վեր ձգած էր Ֆրէսնօն և առժամապէս նիւ Եորք հաստատուած էր, Ֆրէսնօ իրեն վշտավայր մը համարելով յորմէ հետէ իր կողակիցն մեռած էր. իսկ իր զաւակներէն այս արարք ստիպեցին իրեն վերադառնալ հոս և ճաշակել աւելի դառն բաժակ մը։ Իրաւամբ Տիար Մ. Մարգարեան այսպիսի մեղադրելի դերի մը մէջ իր զաւակները տեսնել չէր երազած։

Յանցաւորներն արժանի էին և կամ ծանրագոյն իրենց պատիժն ստացան, ա՛լ պէտք է խնդիրը խպատ վերջացած համարիլ. բայց չէ՛, Ֆրէսնօի Հայերն ալ դեռ իրենց մասն ունին պատժուելու որովհետև այս երկուաձեր որչափ որ իրենց անուններ փոխած և Հայերէն կղզիացած դիրք մը բռնած են եղեր, սակայն և այնպէս տեղացի ժողովուրդը այդ հանգամանքները նկատի չառնելով, զանոնք Հայ կընդունին և անոնց գործածին

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

— Ինչպե՞ս է ձեզ թվում, ինչո՞ւ համար Ամերիկայի հայ գաղութը այդքան քիչ է տալիս Հայաստանի օգնության համար։

— Ես կարծում եմ, որ մեր գաղութի անդամների մեծ մասը ոչ թե չի ուզում, այլ չի կարողանում ավելի շատ տալ։ Ամերիկայի հայերի մեծ մասը աշխատավոր դասակարգին է պատկանում, և նրանց ստացած աշխատավարձը հազիվ է բավականացնում ընտանիքի ապրուստի համար։ Ուրեմն, ինչպե՞ս կարող են նրանք ավելի շատ տալ։

— Ինչպե՞ս եք կարծում, ինչո՞ւ համար Ամերիկայի հայ գաղութը այդքան քիչ է տալիս Հայաստանի օգնության համար։

— Ես կարծում եմ, որ մեր գաղութի անդամների մեծ մասը ոչ թե չի ուզում, այլ չի կարողանում ավելի շատ տալ։ Ամերիկայի հայերի մեծ մասը աշխատավոր դասակարգին է պատկանում, և նրանց ստացած աշխատավարձը հազիվ է բավականացնում ընտանիքի ապրուստի համար։ Ուրեմն, ինչպե՞ս կարող են նրանք ավելի շատ տալ։

— Ինչպե՞ս է ձեզ թվում, ինչո՞ւ համար Ամերիկայի հայ գաղութը այդքան քիչ է տալիս Հայաստանի օգնության համար։

— Ես կարծում եմ, որ մեր գաղութի անդամների մեծ մասը ոչ թե չի ուզում, այլ չի կարողանում ավելի շատ տալ։ Ամերիկայի հայերի մեծ մասը աշխատավոր դասակարգին է պատկանում, և նրանց ստացած աշխատավարձը հազիվ է բավականացնում ընտանիքի ապրուստի համար։ Ուրեմն, ինչպե՞ս կարող են նրանք ավելի շատ տալ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

— Ինչպե՞ս է ձեզ թվում, ինչո՞ւ համար Ամերիկայի հայ գաղութը այդքան քիչ է տալիս Հայաստանի օգնության համար։

— Ես կարծում եմ, որ մեր գաղութի անդամների մեծ մասը ոչ թե չի ուզում, այլ չի կարողանում ավելի շատ տալ։ Ամերիկայի հայերի մեծ մասը աշխատավոր դասակարգին է պատկանում, և նրանց ստացած աշխատավարձը հազիվ է բավականացնում ընտանիքի ապրուստի համար։ Ուրեմն, ինչպե՞ս կարող են նրանք ավելի շատ տալ։

— Ինչպե՞ս է ձեզ թվում, ինչո՞ւ համար Ամերիկայի հայ գաղութը այդքան քիչ է տալիս Հայաստանի օգնության համար։

— Ես կարծում եմ, որ մեր գաղութի անդամների մեծ մասը ոչ թե չի ուզում, այլ չի կարողանում ավելի շատ տալ։ Ամերիկայի հայերի մեծ մասը աշխատավոր դասակարգին է պատկանում, և նրանց ստացած աշխատավարձը հազիվ է բավականացնում ընտանիքի ապրուստի համար։ Ուրեմն, ինչպե՞ս կարող են նրանք ավելի շատ տալ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

— Ինչպե՞ս է ձեզ թվում, ինչո՞ւ համար Ամերիկայի հայ գաղութը այդքան քիչ է տալիս Հայաստանի օգնության համար։

— Ես կարծում եմ, որ մեր գաղութի անդամների մեծ մասը ոչ թե չի ուզում, այլ չի կարողանում ավելի շատ տալ։ Ամերիկայի հայերի մեծ մասը աշխատավոր դասակարգին է պատկանում, և նրանց ստացած աշխատավարձը հազիվ է բավականացնում ընտանիքի ապրուստի համար։ Ուրեմն, ինչպե՞ս կարող են նրանք ավելի շատ տալ։

— Ինչպե՞ս է ձեզ թվում, ինչո՞ւ համար Ամերիկայի հայ գաղութը այդքան քիչ է տալիս Հայաստանի օգնության համար։

— Ես կարծում եմ, որ մեր գաղութի անդամների մեծ մասը ոչ թե չի ուզում, այլ չի կարողանում ավելի շատ տալ։ Ամերիկայի հայերի մեծ մասը աշխատավոր դասակարգին է պատկանում, և նրանց ստացած աշխատավարձը հազիվ է բավականացնում ընտանիքի ապրուստի համար։ Ուրեմն, ինչպե՞ս կարող են նրանք ավելի շատ տալ։

— Սպանիոյ նախարարապետ Տ. Սա կասթա հրաժարած լինելով, նոր նախարարութիւնը կազմուեցաւ Տ. Սիլվելայի նախագահութեամբ որ իրեն վրայ առած է միանգամայն արտաքին գործերի նախարարութիւնը։ Նոր նախարարութիւնը կազմուած է պահպանողականներէ։

— Ճանապարհորդական գործակալութեան տեսուչ Տ. Քուք մեռաւ անցած շաբաթ օր Լոնտոնի մէջ։

— «Իօրելօֆօմանօ» լրագրի լսածին նայելով, անգլիական կառավարութիւնը խնդրեր է իտալական կառավարութենէն որ Քասալայի և անոր չրջակայքի անգլ. եւեգիպտական զօրքերին դրկուելիք ուտեստներն և ռազմամթերքը Մասաուայի և Ակօրտայի ճանբով դրկուին։

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՊՄԷՆԻԱՅ 14ՐԴ ՇՐՋԱՆԻՆ

Ապահետև Արմենիայի 14րդ չրջանի սկզբէն (1898 օգոստոս) բաժնորդագրութիւն չենք կրնար ընդունիլ։

Ինչպէս ծանուցուած է թերթին ճակատը դրուած «Բաժնորդագրութիւն» բաժնին մէջ, ամսական բաժնորդ կարելի է գրուիլ այսուհետև Արմենիային, 1899 յունուար ամսէն և կամ ոևէ ամսի սկզբէն, ամիսը 2½ ֆրանգ հաշուելու և 1899 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

«Արմէնիայի Օժանդակ» եղողներին, վերոգրեալ պայմանի համեմատ իրենց համար ստացած թերթէն զատ, իրենց հասցէով ուրիչի համար քանի թերթ որ ուզեն, կը զրկուի ամսական մէկ ֆրանգ միայն բաժնորդագրին վճարուելով։ («Արմէնիայի Օժանդակութեան կանոնագրերը ձրիապէս կը զրկուի ցանկացողներուն։)

Արմենիայի առաջիկայ 15րդ չրջանին համար բաժնորդագրութիւն այժմէն չընդունուիր. այլ ինչպէս մեր սովորութիւն է, այն ատեն միայն բաժնորդագրութիւն կընդունուի յաջորդ չրջանի համար, երբ Արմէնիայի մէջ կը հրատարակուի թէ այդ նոր չրջանի բաժնորդագրութիւնը բացուած է։

Ոևէ չրջանի մէջ եղած բաժնորդագրութեան հաշիւը իրեն յաջորդ չրջանի հաշուին հետ չխառնուիր։

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲԱՌԳԻՐՔ
ԳԱՂ. ԵՒ ՀԱՑ.
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ
Ի Հ. ՍԻՄԷՈՆԷ ԵՐԵՄԵԱՆ

Աշխարհիկ լեզուով՝ ընդարձակ բացատրութիւններ կուտայ ընդհանուր գիտական և բժշկական իրաց, և մ՛յլ կարևոր նիւթոց վրայ էջերով օգտակար տեղեկութիւնք անպակաս են։ Ծոյն գործոյն բաժանորդագրութիւնը, որ է 10 ֆրանգ, կը տևէ մինչև յարատամսոյն սկիզբն. յետոյ գինը 15 ֆրանգի կը բարձրանայ։ Մինչև ցարդ բաժանորդագրութիւնք հասած են 150ի։

Դիմել մեր հասցէին՝

Direction de l'Imprimerie arménienne
St. Lazare VENISE

ԲԱԶՄԱՎԷՊ
ԱՄՍԱԳԻՐ

ԲԱԶՄԱՎԷՊ կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբն։ Կը պարունակէ Հայ մատենագրական, ստուգաբանական, պատմական, քերականական, աշխարհագրական, ճեմախօսական յօդուածներ և Հանդէս հանդիսից տիեզերսով հետաքրքրական ազգային կարևոր նոր տեղեկութիւնք։ ԲԱԶՄԱՎԷՊ՝ նորատիպ մատեանները վրայ զրոյս իրրև նուէր կընդունի, հակիրճ քննադատականով մը զանոնք կը հրապարակէ։ Բաց աստի կը հրատարակէ Եւրոպական դասական ոտանաւորներու աշխարհաբար թարգմանութիւնք. քաղաքական տեսութիւնք և ազգային բերքերու քաղուածոյ ցանկն։ — Տարեկան գինն է ԿԱՆԽԻԿ 10ֆր. լպ.4. տոլ. 2։

Հասցէ՝

Rédaction de la Revue «Bazmaveb»
St. Lazare
(Italie) VENISE

ՕՐԱՑՈՑԻ 1899 ԹՈՒԱԿԱՆԻ

Կալացի Տ. Ղևոնդ քահանայ փափաքանի հրատարակած 1899 թուականի հայերէն և ռումաներէն պատկերազարդ տարեցոյցը որ կարևոր դիտելիքներով ալ ճոխացած է, ծախու հանուած է արդէն։

Գինն է թղթակազմին 1 ֆրանգ (20 սէնթ)։ Դիմել կալաց, Արժ. հրատարակչի հասցէին։ կարելի է ըստանալ նաև Արմենիայի խմբագրատունէն։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ
ԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Ոմանք իրենց հեղինակած կամ հրատարակած գիրքերէն կը զրկեն մեզ, Արմենիայի խմբագրատան մէջ ծախուելու համար։ Որպէս զի թէ՛ իրենք աւելորդ նեղութիւն կրած չլինին զրկելու համար և թէ՛ մենք ալ ոեւէ պատասխան մը իրենց դրելու համար, այդպիսի փափաք ունեցողներ ուշադրութիւնը կը հրաւիրենք հետեւեալ տողերուն վրայ։

Նոր գիրք մը հրատարակողը նախ 2 օրինակ անկէ պէտք է զրկէ մեզ, անոր հրատարակութիւնը լրագրական սովորութեան համեմատ ծանուցուելու համար Արմենիայի մէջ «Նոր հրատարակութիւններ» վերնագրին տակ։ իսկ եթէ կուզէ նաեւ որ նոյն գրքէն ծախու գտնուի Արմենիայի խմբագրատան մէջ, պէտք է որ մասնաւոր նամակով մը իմացունէ մեզ իր պայմանները և մեր հաճութիւն ստանալէ յետոյ զրկէ մեզ մօտ ծախուելու համար։ Կը խնդրենք որ ոչ ոք չկանխէ մեզ այդպիսի գրավաճառական յանձնարարութիւն անել, առանց մեր հաւանութիւն ստացած լինելու։ Հակառակ պարագայի մէջ, իրենց զրկածի համար ոեւէ պատասխան տալու պարտաւոր չենք համարեր մեզ։

Մեզ յայտնուելիք պայմանները են.

1. Գրքին գինը քանի՞ է Մարսէյլի մէջ ծախելու համար։ Եւ որովհետեւ ընդհանրապէս Մարսէյլէն դուրս զանազան տեղերէ գնել կուզուին այդ գիրքեր, հարկ կը լինի Մարսէյլի համար նշանակուած գինին վրայ աւելցունել նաեւ փոստի ծախքը։

2. Ի՞նչ զեղչ կը լինի խմբագրութեանս համար եթէ կանխավճարով ուզենք գնել. և ի՞նչ զեղչ կը լինի եթէ յանձնարարութեամբ միայն ընդունիլ ուզենք (այսինքն ծախուածին միայն ստակը տալու, իսկ չծախուածը իր տիրոջ վերադարձնելու պայմանով, փոստի ծախքերը տիրոջ հաշուին անցնելով)։

ՄԱՀՈՒ ԴԻՒՐՔԵՐ

Արմենիայի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին հետեւեալ գիրքերը որոնց առջեւ նշանակուած գիներուն մէջ հաշուուած է նաև զրկելու փոստի ծախքը։

Ծրարները ապահովագրուած (recommandé-registered) ստանալ ուզողները պէտք է որ ամեն մէկ ծրարի (մինչեւ 2 քիլօ) համար 25 սանթիմ ապահովագրութեան ծախքը վճարեն։

ԻՆՔՆՈՒՍՈՒՅՑԻՉ ԱՆԳԼԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ
Զօրինակ
ՊԵՏՐՈՍ Ռ. ՊՈՂՈՍԵԱՆ

Այս գիրքը պատրաստուած է յատկապէս Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ գտնուող Հայերուն Ամերիկեան Անգլիերէն լեզուն ամենադիւրին ոճով սովրեցնելու համար։ Ինքնուսուցիչը յօրինուած է դերմանական և ամերիկեան մանկավարժական սկզբունքներուն վրայ հիմնուելով, և յարմարցուած է մարդակազմութեան ու իմացական փիլիսոփայութեան նոր բագոյն պահանջքներուն և Ամերիկայի Հայոց իմացական կարողութիւններուն ու տեղական պահանջներուն։ Առաջինն է իր տեսակին մէջ։

Կը բաղկանայ աւելի քան 350 երեսներէ և կը պարունակէ աւելի քան 3,000 ամենէն չատ գործածուած բառեր։ Ամեն բառի առջև դրուած է նոյն բառի ամերիկեան մատուր անդլիերէն հնչումը և ամերիկեան նշանակութիւնը։ Գիտական բառերու առջև աւելցուած են քերականական, պատմական, աշխարհագրական, աստղաբաշխական, չափաբերական և կերաբանական զանազան ծանօթութիւններ։ Գինն է 10 ֆրանգ (2 տոլար) Մարսէյլի մէջ։ Մարսէյլէն դուրս զրկուելու համար 10 ֆր. և 80 սանթիմ.։

— HISTORY of the ARMENIANS IN INDIA. From the earliest times to the present day. By MESROVB J. SETH Armenian examiner to the University of Calcutta and Member of the Asiatic Society of Bengal. Calcutta. 1895.

(Price: 5 francs at Marseilles or 5 fr. & 50 centimes post free.)

(Մարսէյլի մէջ 5 ֆրանգ է. Մարսէյլէն դուրս զրկուելու համար 5 ֆրանգ և 50 սանթիմ։)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԿԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերուն վրայ մասնաւոր չեղչ կը լինի Գարահատանի Հայերուն համար որոնց կը զրկուի փակագծի մէջ նշանակուած գիներուն։

Ա. ՀԱՑ ԳԻՒՂԱՁՆՈՒԿԻ ՄԸ (Սպառած)
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՄՐԱՀԻԼԻ »
Դ. ԱՋԱՑՈՒԹԻՒՆ ՓՈՒՂՂԱՐԻՈՑ ԵՒ ԿՆՈՋԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՓՈՒՂՂԱՐ ԱՁՕՏԱՍՔԱՑԵՑ (Սպառած)
Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիներուն պանդխտութեան տխուր հեռանկարները սեղմ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական ձեւերով։) Գին (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.
Զ. ԳԱՄԱՌ ՔԱՔԻՈՑ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ ալբումբեցի աւարտելոյն (Սպառած)
Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆՔԸ ՅԱՀԿԱՀՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)
Ը. ԹԻՒՐՔԻԱՒ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ։ Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուին բազդատական մէկ յուցակն ալ կցուած է տեղագրին վերջը։) Գին 50 սանթիմ (35 սանթիմ)։
Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ (Արմենիայի Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանին էջ Մ Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են ցուցարարի մէջ որ ուղեցոյց դերքով 124 երեսներէ կը բաղկանայ) (1 ֆրանգ)։ 1 ֆր. 40 սանթիմ
Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերէն սրած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթմ) ,20 սնթմ.
ԺԱ. ԹՈՄԱՍ ՐՈՑԱՐԻՈ (Ցունաստանի մէջ Թիւրքերէն սրած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Յոյներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) 20 սանթիմ։

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐՔ

Ճաճկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սրբազանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիայի խմբագրատունը։ Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՅՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԿԱԼԵԱՆ

ՄԱՐՍԷԼ
Հալեքճի տպարան Մ. Փորթուգալեանի
Le Gérant: François CARRIERE
Imp. M. Schickler, 9, Quai du Canal. Marseille.